




Ամենայն Ս. Թադեոս եկեղեցիի ընդհանուր պատկերը :

ՀԻՄՆԱՐԿԵՔ ԱՄՄԱՆԻ Ս. ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Նրուսազեմի Սրբոց Յակոբեանց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ ամբողջ Միաբանութեան համար մեծագոյն հաճոյք մը եղաւ Սուրբ Աթոռէն հանդիպել մերկայութիւնը Ամերիկահայ ծանօթ բարերար Ազնւոյարգ Տիար Յարութիւն Թադոսեանի:

Մեծայարգ հիւրը յատկապէս Նրուսազեմ եկած էր՝ ամսմ'ը մերկայ ըլլալու Յարդամանի մայրաքաղաք Ամանի մէջ իր ազնուական հուշրատուութեամբ կառուցուող ճոր եկեղեցիի հիմնարկէքին:

Կիրակի, 10 Հոկտեմբեր 1965, կ. վ. ժամը 3.30-ին Ամանի Իւզպուշեան-Կիւլլէնկեան Ազգային Վարժարան ժամանեց Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեանը, իր հետ ունենալով Մեծայարգ Բարերարը: Ն. Ամենապատուութեան կ'ընկերանային Միաբանութեան անդամներ՝ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան, Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Բարգէն Արքեպս. Ապստեան, Ս. Աթոռի Դիւանապետ Հոգշ. Տ. Շահէ վրդ. Անէմեան, Հոգշ. Տ. Յակոբ վրդ. Վարդանեան. Աւագ-Թարգման Հոգշ. Տ. Գէորգ վրդ. Նազարեան, Ս. Թ. Վարժարանի Տեսուչ Հոգշ. Տ. Կիրեղ վրդ. Գաբրիէան, Հոգշ. Տ. Արշակ Արք. Խաչատրեան, Հոգշ. Տ. Վաչէ Արք. Իգնատիոսեան, Հոգշ. Տ. Վահան Արք. Թօփալեան, Արժ. Տ. Կարապետ Քեհն. Անդրեանեան, ինչպէս նաեւ Սարկաւագներ եւ ժառանգաւոր տաներ:

Ն. Ամենապատուութիւնը եւ իր շքախումբը ընդունուեցան Ամանի Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Անուշաւան վրդ. Զգջմեանի, Ազգային Վարժարանի Տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, աշակերտութեան եւ Ամանահայ ազգայիններու կողմէ, որոնք ծափաղայններով դիմաւորեցին պատկառելի հիւրերը:

Կարճ պահ մը հանգստանալէ ետք, Ն. Ամենապատուութիւնը եւ Միաբան Հայրեր Բարձրացան Ազգային Վարժարանի կից հողամասին վրայ առժամարար կառուցուած խորանը, ուր, հոծ բազմութեան մը մերկայութեամբ, կատարուեցաւ Ամանի Ս. Թադէոս եկեղեցիի հիմնարկէքը: Արարողութեան ընթացքին Պատրիարք Ս. Հայրը օրհնեց տասնվեց հիմնադրերը, որոնք պիտի գտնուէին եկեղեցիի հիմքում մէջ: Հիմնարկէքի տալարիչ այս արարողութեան մերկայ եղան նաեւ Ամանի Յովնաց Գերշ. Եղիշէպետը եւ Ղպտոց Հոգեւոր Հովիւը:

Արարողութենէն ետք Ն. Ամենապատուութիւնը Մեծայարգ Բարերարին եւ իր ընկերակիցներուն հետ հանգստացաւ Վարժարանի հիւրատանին մէջ, ուր Ամանի հայ գաղութի մերկայացուցիչները եկան շնորհատրելով Պատրիարք Սրբազան Հայրն ու Բարերար Ազն. Տիար Յարութիւն Թադոսեանը:

Նայն միջոցին Ամանի հայ գաղութին կողմէ շնորհակալիքի արդէն դոյզն մշան՝ Պրմ. Թադոսեանի ընծայուեցաւ գեղեցիկ ծաղկեփունջ մը եւ մերկաներն ալ ծափաղայններով միացան յարգանքի ու երաստագիտութեան այս քերտ արտայայտութեան:

Նայն երեկոյ, Ամենապատիւ Պատրիարք Սրբազանը, ընկերակցութեամբ Մեծայարգ Տիար Թադոսեանի եւ շքախումբի անդամներուն, վերադարձաւ Նրուսազեմ:



Ն. Ամենապատոււթիւնը հիմնարկէին անիջապէս ետք,
Բարեբաբ Ազն. Տիար Յարութիւն Թարոսեանի հետ: